


ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du Journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզիպոսի համար տրեկն. ողջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղումը նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՅԱՒԵՐԺԱԿԱՆՔ

—Քանի որ Թրանսպի աղակաւորանե-
րը անմահ են, մենք ալ պատճառ մը չունինք
յաւերժականներ չըլլալու :

Ահա՛ ինչ կը մտածեն Աղեքսանդրիոյ մեր
պատուական թաղականները, և կը շարու-
նակեն իրենց ինքնակոչ պաշտօնը հիանալի
անտարբերութեամբ մը և այնպիսի գոհունակ
խղճմանքով մը որ կարծես ժողովուրդը — ա-
նա՛ն մի հրաժարիք — կը պոռայ իրենց :

Մինչդեռ իրողութիւնը այդպէս չէ :

Բարձր ընկերութեան պատկանող կիներ-
ընկերութիւն մինչեւ յետին գաղթականը հա-
րիւրաւոր առիթներու մէջ յայտարարած են
թէ ալ բաւական է այս աղաներուն պաշտօ-
նավարութիւնը ուր գեղծութեան իրարու կը
յաջորդեն և իրարու չեն նմանիր :

Իրաւ է որ զեղծումը բաւը մեզ համար
այն նշանակութիւնը չունի ինչպէս որ կը մ-
ընունէ ժողովուրդեան մէկ մասը : Զեղծումը
սկսելով մենք դրամական indelicatessesները չէ-
որ կը հասկնանք, և նախ մենք մեզի չենք նե-
րեր այդպիսի ողբեր կասկած ունենալ պաշ-
տօնական մարմնոյ մը դէմ որուն էն մեծ
յանցանքը՝ անպատճառ պաշտօնի վրայ մնալ
ուզելն է : Աղեքսանդրիոյ թաղականները ի-
րենց անհատական գիւրջով այնպիսի անճա-
ւորութիւններ են, — խոստովանինք — որ շատ
վեր են այդպիսի կեղտոտ կասկածէ մը :

Բայց, ըստ մեզ, դրամական զեղծումը
ներքէ շատ աւելի մեծ է իրենց գործած զեղ-
ծումը. բացատրենք. երբ ընտրուած մար-
մին մը՝ հակառակ զինքը ընտրողներու կամ
քին՝ դեռ իր պաշտօնին վրայ կենալ կու-
ղէ և զայն կը շարունակէ, զեղծում մըն է
այս զոր կը գործէ ընդդէմ ազգային օրէնք-
ներու, ազգային արժանապատուութեան և
ընկալելալ սովորութիւններու :

Դուքով ընտրուած թաղականները իրենց
առաջին պարտականութիւնը սեպած են հրա-
ժարիլ այն օրը ուր իրենց mandatն կը վեր-
ջանայ :

Զննչածագի մէջ անգամ այս այսպէս է,
ինչո՛ւ ուրեմն Աղեքսանդրիոյ աղաները Սահ-
մանագրութեան այդ տարրական պայմանը
չեն ուզեր յարգել :

Ասկէ մէկ ու կէս տարի առաջ կը վերջա-
նար Աղեքսանդրիոյ թաղականներուն պաշտօ-

նավարութիւնը. ասկէց ի վեր հազար անգամ
գանգատներ եղան, հարիւր անգամ հասկը-
ցուցին իրենց թէ զեղծում մըն է որ կը գոր-
ծեն, նամակներ գրուեցան ուր ուր անկ է, բայց
նորէն, հակառակ ամենուն օրինաւոր կամքին,
հեղինոտ ժպիտով մը ուսերնին կը թոթովեն
և կարծես ըսել կուզեն «J'y suis, j'y reste» :

Եւ երբ ժողովուրդը մը չի յարգուիր, ին-
չո՛ւ կուզէ որ յարգուին թաղականները : Այ-
լանգակութիւն մըն է ասոր հակառակը մը-
տածելը :

Թաղականները՝ նոյն իսկ իրենք համոզ-
ուած են թէ ժողովուրդը անհամակիր է իրենց,
սակայն չեն գիտեր ինչո՛ւ խուլ ալանջ լըլլան
և կարծես աւելի ուժով կը փաթթուին իրենց
պաշտօնին, ու կարհամարհեն ժողովուրդեան մը
ձայնը :

Ահա՛ ուր կսկսի զեղծումը, որ դրամա-
կանէն շատ աւելի ծանր է և անկէ՛ աւելի
դատաւարանի :

Օրինաւոր պատճառներ եթէ կան, tant
mieux ! ագոնք պէտք է մէջտեղ դրուին, հան-
րութիւնը պէտք է գիտակից ըլլայ անոնց. որ-
քան որ մութին մէջ գաղտնիքի երեւոյթին
տակ կը պահուին անոնք, կարելի չըլլար ար-
գիւրէ որ ժողովուրդը չի պոռայ, լրագիրը չի
գրէ և ամեն մարդ չի մտածէ իր ուզած ե-
ղանակովը : Արհամարուած ամբողջին պէս ան-
զըսպելի ոյժ չի կայ. պէտք չէ մոռնալ իմաս-
տուններուն սա խօսքը. Vox populi, vox dei :

Թաղականները կա՛մ հրաժարելու են և
կա՛մ ըսելու են թէ ինչու կը կենան :

Ասիկայ է ահա Աղեքսանդրիոյ թաղականներուն
ըսածը որուն արձագանգ կըլլանք աղատ հա-
մարձակ, քանի որ . . . մամուլ մը փոխ ա-
ռած ըլլալու դժբախտութիւնը չենք ունեցած
նաեւ Աղեքսանդրիոյ արիւտագործներէն :

ՈՐԲԱԽՆ ԱՄԻՆ ՀՐԱԻԷՐԸ

Ա. Խոյսեղանի

Փարոս պատուական լրագրի

Ինչպէս յայտնի է, Գաւառ. Վարչութեան Պատ-
Պաշտօնական Ժողովը Պարոս Ամեն. Ս. Պատրիարք
Հօր մէկ շրջաբերականէն ներշնչեալ, անյետալ տար-
ւոյ յուլիսի մէջ կազմեց միայուն Յանձնաժողովս
պաշտօնով որ աստ ի Գաւառէ գրամական հանգա-
նակութիւն կատարէ և անոր արդեամբ Հայաստա-
նի օրերէն խուսք մը պաշտօնանէ իր յարմար դա-
տած մէկ տեղայն մէջ : Յանձնաժողովս այն ատեն
այդ նպատակաւ հաստատեց հանգանակութեան տու-

մար մը, ուր բաւական թուով բարեսէր տղայներ
տարեկան նպաստներ ստորագրուեցան :

Անկէց յետոյ սակայն, ինչ ինչ նկատումներով
պահ մը մտածուեցաւ յեզիպոս բանալ այդ օրե-
րուն համար յատուկ հաստատութիւն մը, և առ այս
կատարուեցան պաշտօնական անձերու և տեղերու
հետ թղթակցութիւններ ու բանակցութիւններ, որք
թէ եւ երկար ժամանակ զբաւեցին, բայց դժբախ-
բար եզրակացութեան մը չյանգեցան :

Հետեւեալէս Յանձնաժողովս կարելի միայն
ի գործ դնելու հարկին առջեւ՝ իր երկիր գումար-
ման մէջ, որ տեղի ունեցած է ընդ նախագահու-
թեամբ Առաջն. Տեղապահ Գեր. Տ. Յակոբ Դ. փար-
դապետ Աղտի, Ընթերցասիրոյ ընկերութեան խոր-
հրդարանը, վերջնապէս հրաժարած է յեզիպոս
յատուկ օրանոց մը ունենալու գաղափարէն, և ու-
րոշած է որ ամեն տարի տեղւոյ բարեսէր տղա-
քաններէն հանգանակութիւն մը կատարուի և ար-
գիւրէր զրկուի մեր հայրենի երկրին մէջ արդէն հաս-
տատեալ օրանոցներու, ուր հայ օրը երկուսեւ մա-
նակներ, նիւթական, բարոյական և ուսումնական
ամեն ճեղակ ինչպէս կը զարգանայ :

Հետեւեալս, Յանձնաժողովս 50000ֆն աւելի ան-
տէրունը և ամեն տեսակ գրկանաց ու փորձութեանց
նշաւակ մանուկներու և մանկուհիներու անունով
Փարոսի միջոցաւ ջերմապէս կոչում կրէ Գաւառի
և շրջակայից ազնիւ հայրենակցոց առատաձեւն ու
վեհանքն զգալմանց և կը խնդրէ որ ազգին ու հայ-
րենեաց այս ճգնաժամին մէջ քաջաբեր ու սատար
հանդիսանան այս նուիրական գործին, ամեն ազ-
գային իր կարողութեան համեմատութեամբ տարե-
կան նպաստ մը ստորագրելով հանգանակութեան
տոււարին մէջ և անգործարար փոխարէն նոյնը վը-
ճարելով Յանձնաժողովոյս Գանձապետ Մեծ. Յով-
հանէն էֆէնտի Եազըճեանի :

Մնաճը յարգանք

ի դիմաց Գաւառի Որդանալ Յանձնաժողովոյ

Ասեմաղպիւր

Ասեմաղպես

Մ. ԱՆԱՆԱՆՏ

Պ. ԲՈՂԱՏ

Գաւառ 5/17 մարտ 1898

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հաղորդեն եւրոպական թեր-
թերուն թէ մեծ տէրութեանց դեսպանները
մարտ 9ին նամակ մը ստացեր են հայ յեղա-
փոխական վարչութիւնէն որ անոնց ուղադրու-
թիւնը կը հրաւիրէ Վանայ մէջ գործուած նոր
խտրութիւններուն վրայ :

Նոյն նամակով դեսպաններուն միջամտու-
թիւնը կը խնդրուի ազատելու համար Տրի-
պոլիս արքայապետ աղջիկ մը, քոյր Տիգրան
անուն հայու մը որուն համար օսմ. իշխանու-
թիւնները վերջերս ծանուցեր էին թէ մեռած է :

—Կ. Պոլսոյ դեսպանները համիմաստ
ծանուցադիր մը տուեր են Դրան, 2,000,000
ֆրանքի հատուցում պահանջելով այն վնաս-

ներուն փոխարէն զորս իրենց հպատակներ կրած էին 1896 օգոստոսի ջարդին ու կողոպուտներու միջոցին :

—Գերմանիոյ կայսեր «Սաղիմական ուխտագնացութիւնը», որ առաջիկայ ապրիլին տեղի պիտի ունենար, աշնան յետաձգուեր է : Վիլհելմ Բ. հոկտեմբեր 27ին երուսաղէմ այցելելէ ետք, ուր երեք օր միայն պիտի մնայ, գերմանական նորակառոյց եկեղեցիին օծման հանգէսին ներկայ գտնուելու, ի դարձին Կ. Պոլիս պիտի այցելէ և չաբաթ մը Սուլթանին հիւանդանոց հրահանգ ստացեր է նորոգելու կանոնադրելու տալու այն ճամբաները որոնցմէ ձիով պիտի անցնի կայսրը :

—Թայմզի Կ. Պոլսոյ թղթակիցը կիմանայ թէ Դուռը որ խոստացած էր Յունաստանի պատերազմական տուգանքին 25 միլիոն ֆրանքը Ռուսիոյ փոխանցել, իր պարտքին փոխարէն, հիմակ 12 ու կէս միլիոն միայն վճարել կուզէ : Ռուսական դեսպան Պ. Չինովիէֆ յայտարարեր է թէ 18,750,000 ֆրանքի կը համակերպի :

—Գերմանիա իր զօրքերը ետ կը կանչէ Կրէտէն : Այս է օրուան կարեւորագոյն լուրը զոր կը հաղորդեն հեռագրական գործակալութիւնները : Գերմանիա իր այս անակընկալ ընթացքը կարգարացունէ միւս մեծ տէրութիւններուն առջեւ՝ առարկելով թէ ինք հակառակ է Եօրկիոս իշխանին Կրէտէի կառավարիչ անուանման որուն վրայ դարձեալ սկսած է պնդել Ռուսիա :

—Երուսաղէմի Հիւսէյինդատէ և Հանէֆիզատէ ծանօթ թուրք ընտանիքները որոնք անակնկալ կերպով Պէրութ տարուած էին, անկից էնկիւրի զրկուեր են :

—Դուռը որոշեր է պատերազմական երկու երկաթուղիներ շինել տալ. մէկը Պէրուզամէն մինչեւ Պանտըրմա, Մարմարայի ափական ծովափին վրայ. միւսը Ռօտտոթոյէն Փէրէճիք, Սեւանիկ-Տէտէազաճի գծին վրայ : Այս կրկին գիծերուն միջոցաւ, դիւրին պիտի ըլլայ Փոքր-Ասիան ուղղակի Ռուսիոյ զօրք փոխադրել, առանց զանոնք Կ. Պոլսէն անցընելու :

—Ալթէնքի ոստիկանութիւնը իր քննութիւններն ու խուզարկութիւնները առաջ կը տանի գտնելու համար հետքը այն գաղանի ընկերութեան որուն կը պատկանէին Եօրկիոս թագաւորին վրայ սպաննութեան փորձ կատարողները : Նորանոր ձերբակալութիւններ իրարու կը յաջորդեն Գարտիճի և Ճիօրճի վերաքննութիւն պահանջած էին այն որոշման դէմ որուն համեմատ եղեռնադատ ատենին առջեւ պիտի դատուին : Այս խնդիրքին մերժուեր է :

—Լորա Օղզպէրի յառաջիկայ երկու շաբթի Նիս պիտի երթայ օգափոխութեան Անգլիոյ նախարարապետը տկար է միշտ և աշխատելու անկարող վիճակի մէջ :

—Սպանիոյ և Սիւցեալ նահանգներու միջեւ կացութիւնն անորոշ է, թէեւ միտքերը գրգռուած կը մնան : Սպանիա բարեկամական ձեւի տակ դիտողութիւններ ուղղած է Վալենկիթնի կառավարութեան, յայտարարելով թէ արդի պարագաներուն մէջ պատերազմ մը՝ ոճիր մը պիտի ըլլայ մարդկութեան դէմ : Ասով հանգեւրձ, Ամերիկա կը շարունակէ

իր պատրաստութիւնները : Մէյն զրահաւորին պայթման պատճառները քննող ամերիկեան յանձնախումբն իր տեղեկագիրը պիտի տայ այսօր նախագահ Մաք Դինլէի որ սակայն որոշած է ծածուկ պահել զայն, մինչեւ որ ժամանակը հասած նկատէ հրատարակելու :

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

Mieux vaut tard que jamais.

Ուրախ եմ որ Ռոքսիսեմ Յանձնաժողովը ընդ զարկ մը տալ կը փորձէ իր ստանձնած մարդասիրական գործին, որ պահ մը ընդհատուած մնաց : Ինչպէս կերելի իր պաշտօնական յայտարարութենէն զոր հրահարակած եմ մեր այսօրուան առաջին երեսին մէջ, այս մարմին իր յորեքարքի գիշերուան նիստին մէջ որոշեր է վերջնապէս հրաժարիլ այստեղ որքանոց մը հաստեղու գաղափարէն, ու անոր փոխարէն նախապէս սկսած հանգանակութիւնը շարունակել, Հայաստանի այլապէս կողմերը բացուած որքանոցներուն նպաստելու համար : Մեր «Վերջին կոչ մը» խմբագրականին մէջ շեշտած էինք արդէն թէ գաղափարներ մէջ պէտքերն ու կարոտքներն այնքան շատ են ու սխալողական, որ բարեգործելու ամեն եղանակ իր օգուտը կունենայ այդ սարաքաղ մանուկներուն վրայ. յայտարարումը ու վարանումը միայն ցաւալի են : Յանձնաժողովը եւ գործնական ճանքան ընտրեր է. դրամ հաւաքել ու դրել : Աւելի աղէկ :

Հիմա, կարգը Եգիպտոսի ամբողջ հայութեանն է, Դահիւրէի ու Մոնեֆաւերիոյ ազգայիններուն մանաւանդ, պատահականէն այս հրաւերին ու ամեն մարդ իր կարողութեան չափով մասնակցիլ ընդհատութեան ռուս գոյանալիք գումարը պարբերաբար պիտի հասցուի ամենէն աւելի բազմակարոտ որքանոցներուն : Այսօրու ոչանալէն ետքը՝ Եգիպտոսի հայ գաղութը գոնէ պակասաւելի գումարով մը հասնելու է այն մեծ աղէտին որուն օտարներն իսկ կը կարեկցին հեռուէն : Ազգասիրութեան ու մարդասիրութեան գաղափարն կը խառնուի, այս պարագային մէջ, մեզի համար, արժանապատւութեան հարկ մը :

Փարոսի մէջ հանութեամբ պիտի հրահարակենք հանգանակութեան ցուցակները :

ՏԱԽՏԱԿԻՆ ԵՒ ԻՄ ՄԻՋԵՒ

Տառնութեան դարձեալ առաջին կայս մը, article de curiosité պէս բան մըն էր Փարիս հանդէսը, տանտիրուհին :

Ժամանակի այդ ահաւորին հոտոնքին առջեւ շատ բան կորսնցուցած էր խեղճը : Ականքները և մազերը թափած էին, կրած հասակ մը, մագուղաթեայ այտեր և մոմայի ձեւերը ունէր ան, ինչպէս նաեւ անորոշ նայուածք մը և սեւնալու վրայ եղող շրթներ : Կործնելի վրայի երբեմնի կորուստիւնները կարծես ժամանակին տուած բուռնացքին տեղափոխուելով անցած էին հիմա կանակին վրայ որ կազմած էին սղլտիկ կուզ մը որ բուրդէ սեւ շալի մը արուեստովի ծալքերուն տակ կը ծածկէր Փարիս հանդէսը :

Երկու բան միայն անեղծ մնացած էին իր բով, լեզուն՝ որ հակառակ ութսունամեայ գործածութեան չէր մաշած և իր . . . état civil :

Աշխարհը եկած ատենը —աղջիկ է— ըսած էր դայեակը իր ծնողացը . ութսուն կամ հարիւր տարի

ետքն ալ Վերին իշխանութեանց առջեւ ներկայացած պահուն կուգէր որ հոն ալ —աղջիկ է— ըսէր Պետրոս առաքեալը, արքայութենէն մտից տոմս մի տոնելու համար : Եւ ես կենթադրեմ թէ Փարիս հանդէսը այն ազդեցութիւնը պիտի ընէ եղեմապաշտօնի վրայ ինչ որ բոլոր է իմ վրայ երբեմն նստակ մը որ սիրուած աղջկան մը գրկուելէ վերջը ինձ կը վերադարձուէր . . . առանց բացուած ըլլալու :

Եթէ իր ֆիզիքականին տեղակ վիճակէն դուրս Փարիս հանդէսը, երբեք զեղեցիկ եղած ըլլալու չէր, ինչ որ կը բացատրէր քիչ թէ շատ նստակին անվթար վերադարձի պարագան :

Շուր սկսած ամեն մեղքերէն կը պոգալ . շահագործութիւնը, շատակերութիւնը և . . . երբորդ Շուր մեղքը որ Բոննայ տը Երկին ամենէն շատ մատնանիլ եղած յատկութիւնն է, իր անտիական հոգւոյն և մարտը մարմնոյն վրայ երբեք ազդեցութիւն չէին կրցած ունենալ :

Շաղկապութիւն, ա՛յ, իր միտք մեղքը, որուն մեղմացուցիչ պարագան . . . Օրթագեղցի ըլլալն էր :

* *

Չորս տարի ապրեցայ իր տան մէջ. Երկուրէն էրք միմիայն : Այդ պատճառովս կենսակցութեան մէջ ձոր մը գործարարութեան, և տարփոխիլ մը սկսել կը գտնէի ութսունամեայ պատու աղջկան կրծքը սրտին մէջ :

Գտնուելի, սիրոյ առարկայ մը դարձած էի եւ իրեն համար :

Սովորական բանասփոքուն պէս չէր որ կը ընտելէի սոց տան մէջ : Ձեռք գիտեր ինչո՞ւ ան գէշ այնքան կը սիրէր, բայց ապահովապէս իր սեւ աչքերուն համար չէր որ այնքան սերտիւ կապուած էր ես իրեն : Ճշմարիտ դակի մը պէս կը խնամէր զիս. մտքէս անցած իրադարձել կը ջանար . կը յարգէր կամքս, և ամեն քահանայութեան աչք կը գոցէր ու գտնուէր կատարելու մէջ մատնաւոր հանդէս մը կը դարձար :

Աշխարհին մէջ ինձմէ աւելի մօտ մէկը չունէր, հետեւաբար ես միայն կրցած էի տեղ մը ունենալ իր կոյտ հոգւոյն և չի գործածուած սիրոյն մէջ :

Ձիւս բամբակի մէջ կը մեծցնէր, ինչպէս կըսեն : Պատիկ մէկ հազար ամբողջ գիշերներ չէր քնացնէր զինքը, հարբուխ մը թունդ կը հանէր սիրտը, և գիշերուն մը բացալայտութիւնս պատահականաբար առջեւ կը գամէր Փարիս հանդէսը, որ վերադարձիս կողմէս սէր անկապիլ և մտահոգ սիրոյ մէջ խառն աղջկան մը պէս :

Տանը ծայրայեղ մարտութիւնը, եփած կերտ, կարկերուն համակութիւնը, ամեն միայրկեանի պըլտիլ խնամքները և ինձ համար ունեցած մայրական գուրգուրանքը զիս այնպէս մը կապած էին իրեն ու երբեք մտքէս չէր անցնէր ձգել երթալ այդ տունէն որ սակայն Օրթագեղցի ամենէն կորուսեալ մէկ փոքրիկ մէջ կը գտնուէր :

* *

Փարիս հանդէս Օրթագեղցի ամենէն մարբախըր կ'ընէ :

Խոհանոցէն սկսեալ մինչեւ ննջատենեակը, առանց կարելի չափարար մարտութիւն մը կը տիրէ : Փաշիկ հիւրէ մը կարելի չէ գտնել որ և է մէկ անկիւնը : Անոր մարբախութեանը վրայ ձեղի դադափալ մը տալու համար, սա չափը միայն ըսեմ որ, երբ Փարիս հանդէսը աղտոտ բառ մը կարտադնէր և կամ, օրինակի համար, Աշխարհը Պատրիարքին անունը տալու հարկին մէջ կը գտնուէր, անմիջապէս իւր հանոց կ'ընէր քանի մը կաթիլ ջուրով բերանը ցողուելու :

Սենեակներուն տախտակամածները այնքան անգամ լուացուած էին տանը հիմնարկութենէն ի վեր, որ հիւսիսէն բռնուած գեղատի աղջկան մը սուտերուն գոյնը առած էին, գոյն մը որուն մէջ խուռն կը և շուշանը իրենց երկները կը դնէին :

Միշտ կատկած մը ունեցած էի թէ տանտիրուհիս իմ վրայ ունեցած սէրէն քիչ մը կը գոչնար իր տախտակներուն տալու համար, որոնց սիրուն ոճիկ մը գործելու կարող էր : Վա՛յ անոր որ անոնց վրայ աղտոտ կոշիկով մը բաղելու սրբապղծութիւնը աչք տանէր :

Ես կարծեմ որ չէ թէ ինձմէ, այլ ինքզինքնէն աւելի տախտակամած կը սիրէր, որովհետեւ ինչ

զինքը շարաթը անգամ մը կը լուար, իսկ տախտակները երկուք :

Իրեն համար մարտասիրութիւնը՝ կրօնք մը, պաշտամունք, պարտականութիւն մը դարձած էր :

— Ես՝ քեմիզեաւորեանս ուղղութիւն չեմ կարգուեր, ի՞նչ գիտցար, կը կրկնէր յաճախ :

Զի հաւատալու պատճառ մը չունէի :

* *

1896 օգոստոսի տարին երբ Պոլսոյ մէջ ձերբակալութեան համաճարակը կը տիրէր որմէ ետ ալ բռնուեցայ երեքշաբթի առտու մը :

— Հոգը մընէր, ես թող չէմիտար որ բեղի տանին, ես Ֆայիզ պէյին կը զուրցեմ՝ քի շնչակ շնչադուն, ան ինձի կը ճանչնայ :

Բայց դժբաղդաբար այն ատենները Լոնտոնի խօսքին ակունջ չէին կախեր, ո՛ր մնաց... Փարիսին Սհարեկում, ստակում կը տիրէր գեղին մէջ, աս ու ան կը ձերբակալէին, առանց քննութեան, առանց հարցումներու :

Աղետաբեր երեքշաբթին հասաւ : Առտուն դըլխարիս դնելու վրայ էի դուրս ելլելու համար :

Գուռը կը զարնուի :

Աստուած իմ, եկան :

Տարտակամածին և երեսիս գոյնին մէջ տարբերութիւն մը ըլլալու չէր այդ վայրկեանին :

Հինգ զինուոր, չափուե մը և գեղին մը լսմարը ներս կը խուժեն վայրենաբար :

Փարիս հանում պատին կռթնելու հազիւ ժամանակ կունենայ և լալ մըն է կսկսի :

— Հայքե պազալըմ, կըսեն ինձի :

Եւ սանդուխներուն կը ժողնան վեր ելլելու և սենեակս խուզարկելու համար : Փարիս հանումը, նոր խան տ'Աբը, կը նետուի անոնց առջեւ և սանդուխին ստորոտը թեւատարած՝ կարգիլէ որ վեր ելլեն :

Այդ վայրկեանին իմ էութիւնս անոր շրթներէն կախուած էր. միթէ ինձի հազար անգամ չէ՞ր ըսած թէ պէտք եղած ատենը պիտի կրնար զիս ազատել Ֆայիզ պէյի ճանկերէն :

Ահա այդ վայրկեանը հասած էր :

Փարիս հանումը ճիգ մը ըրաւ ինքն իր վրայ և սա բառերը արտասանեց, խօսքը ուղղելով վեր ելլելու ճիգը զինուորին :

— Ծո՛, շունչանորդի, խուճուարարընը չըգար :

Տախտակամածները, ա՛խ, միշտ տախտակամածները, զիս մոռցա՛ւ զանոնք պաշտպանելու համար :

ՌԱՏԱՄԵԼ

ՄԵՐ ՄԱՍՈՒԼԻՆ ԽՆԴԻՐԸ

Փարոսի բարեկամ ու համակիր ընթերցողներու կողմէ թէ՛ նամակով և թէ՛ բերանացի կերպով ցաւի ու զարմանքի արտայայտութիւններ եղան մեզ՝ Առաջնորդարանին պատկանող տպագրական մամուլը ծախու հանելով մեր ձեռքէն կորցելու գաղափարին դէմ զոր յղացած է Քաղաքական ժողովը : Կը հարցունեն միանգամայն որ, եթէ երբեք այս միջնադարեան խորհուրդը գործադրուի, ասիկայ կրնա՞յ պատճառ ըլլալ թերթին հրատարակութիւնն ընդհատելու :

Կը փութանք պատասխանել թէ՛ ընտել երբեք : Այդ մամուլը, իր յարակից մանր մանր կազմածներով, իրաւ է թէգիւրութիւն կընծայէ մեզ տպագրական գործերու. Առաջնորդարանի վարիչներուն կազմակերպելիք աճուրդը միմիայն այդ գիւրութենէն կրնայ զրկել զմեզ, ինչ որ առնչութիւն չունի թերթին հրատարակման հետ : Եւ եթէ հակառակն իսկ ըլլար, մեր ընթերցողներն ալ մեզի հետ կը մտածեն անշուշտ թէ Քահրէի մէջ միշտ պիտի գտնուի տպարան մը, — աս բարական, եւրոպական կամ յունական, —

որ համետ վարձքի մը փոխարէն ստանձնէ Փարոսին կանոնաւոր տպագրութիւնն իր մանակին վրայ, բան մը զոր մեր բարեխնամ Առաջնորդարանը կը մերժէ :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ամենայն Հայոց Հայրապետ Բագու գըտնուած միջոցին, տեղւոյն Հայ գործարանատէրներուն և ուրիշ հարուստ ազգայիններու կողմէ բարեգործական նպատակի համար եղած նուիրատուութիւններուն գումարը կը հասնի 100,000 լուբլի : Ն. Ս. Օժուլթիւն Խրիմեան Հայրիկ փետրուար 17/29ին Էջմիածին ուղեւորեր է հանդիսաւոր գնացքով և բազմաթիւ ուղեկիցներով :

Տիկին Պողոս փաշա Նուպարի նախագահութեամբ Տիկինայ մանախումբ մը կազմուած է, որ ազնուաբար յանձն առած է աշխատիլ՝ Գալստեան վարժարանի աշակերտահայ ձեռագործները բաշխել գլխաւոր և առատաձեռն անձանց, գրամական հատուցման մը փոխարէն, որմէ գոյանալիք գումարով աղքատ դպրոցականներու հագուստ պիտի շինուի Զատիկի տօնին առթիւ : Մանախումբի անգամահիններն են՝ Տիկին Եղստֆ Աղիզ պէյ և Տիկին Պ. Կարապետեան : Տարակոյս չունինք որ իրենց գիմումները արդիւնաւոր պիտի ըլլան :

Վաղը, կիրակի, ընթանկան Երզնանի մեջ տեղի կունենայ, այսի Տիկին Շ. Ալփիարի բնակարանը, արտաքին գործոց նախարարութեան քաղաքական ղեկավար Երզնէ Արքիմ պէյ Խիքեհեանի Եւանախօսութիւնը Օրիորդ Մալիկիա Ալփիարի հետ, քոյր լրագրոյս Երզնէ-խմբագրին :

Ինչպէս արդէն ծանուցինք, Ընթերցասիրաց ընկերութեան կազմակերպած նպատի երեկոյթին պատրաստութիւնները փութով առաջ կը տարուին, Գործադիր ժողովոյ կողմէ : Յայտագրելը, գոր այսօր տեղի անձկութեան պատճառաւ կը ցաւինք չի կըրնալ հրատարակելու, ճոխ պարունակութիւն մը ունի և պիտի կրնայ լի ու լի գոհացնել թատերասեր և երաժշտասէր հասարակութիւնը : Անշուշտ մեր ազգայինները չպիտի զլանան իրենց աջակցութիւնը նուիրել այդ բարեկամատակ գործին և սիրով պիտի ընդունին ընկերութեան հրաւերը :

Մարտամանութիւնները մեր չորեքշաբթի օրունան թուով :

ԱՂԲԱՏԱՆԱՍ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Աղեքսանդրիոյ

Պատիւ ունինք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ՛ ընկերութեան Ընդհ. ժողովոյ կողմանէ վաւերացեալ կանոնագրութիւնն՝ այս անգամ Աղեքսանդրիոյ Պատ. Թագ. Խորհրդոյ կողմանէ եւս վաւերացուելով, ընկերութիւնս վերջնական կազմակերպութիւնն ստացած և իւր Տնօրէն ժողովն գործառնութեանց սկսած է, բաժնեկող պաշտօններն իր անդամաց մէջ հետեւեալ կերպով.

Տնօրէն	Ս. Դանիէլեան
Ս. Դանիէլեան	Բ. »
Պ. Օհանեան	Ա. Ատենադպիր
Ղ. Ասրուհի	Բ. »
Ե. Թուրքեան	Գոնձապետ
Յ. Զարբեան	Անդամ
Լ. Պէրպիւրեան	»

Ի գլխայ Տնօրէն ժողովոյ

Ա. Ասենադպիր

Ա. Ասենապետ

Պ. ՕՀԱՆԵԱՆ

ՏՕԳԹ. Մ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Աղեքսանդրիա, 17 մարտ

Առաջնորդարանէն՝

Բնիկ Տէրէնտէյի, բայց ի վաղուց հետէ Պոլիս հաստատեալ Յովհաննէս աղա Շամլեանի փեսան Պ. Փիլիպպոս Յակոբեան Տէրէնտէյի տարի ու կէս առաջ Եգիպտոս գալթած ըլլալով, ժամանակ մը Աղեքսանդրիա և Թանթա կեցած է. բայց ատենէ մը ի վեր իր վրայ տեղեկութիւն չի կայ : Կը խնդրուի որ յիշեալին ո՛ր ըլլալը գիտցուը հազորդէ Առաջնորդարանիս :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խտիմլ այս առաւօտ հանդիսական թափուրով քաղաք եկաւ ու նախագահեց Մահմալի հանդէսին, որ կատարուեցաւ սովորական շքով : Կառավարական բոլոր պաշտօնատուները գոյ են այսօր՝ այդ հանդէսին պատճառաւ :

— Տեղական մամուլը կը շարունակէ բողոքել՝ երկաթուղիի երթուղարձի տուններու դրութեան շնչման դէմ : Վերջերս կառավարութիւնը քննութիւն մը բանալով ստուգած էր թէ այդ տնօրինութենէն ի վեր երկաթուղիի հասցիներն աւելցած են : Արար թերթերը կըսեն թէ այդ քննութիւնը կատարուելով այնպիսի եղանակի մը մէջ ուր ճամբորդները բազմաթիւ են, վաճառականները բամպակի համար կերթեւեկեն և այլն, բնական էր որ նպաստաւոր արդիւնք պիտի տար, մինչդեռ եթէ ամառը կատարուէ՝ ճիշդ հակառակը պիտի ցոյնէ :

— Սէրասար Քիչնէր փաշայի վերջին տեղեկագրին նայելով, Տէրփիլները Նեղոսն անցեր են Շէպէլի կղզիին մօտ, բայց ետ մղուել են Եգիպտական բանակին կողմէ : Տէրփիլներէն 38 հոգի մեռած կայ ու բաւական թուով ալ վիրաւորուած : Եգիպտացիներէն՝ անգլիացի հրամանատարը վիրաւորուել է ուսէն :

— Ռօճըրս փաշա Տամիէթ ուղեւորեցաւ այն կողմերու առողջապահական վիճակը քննելու :

— Գահրէի աւստրիական գաղթականութեան մէջ ստորագրութիւն բացուած է՝ Պրանձ Եօսէֆ կայսեր յորէլեանին առթիւ Ռուստոֆ հիւանդանոցը մեծցունելու համար : Մինչեւ հիմա հանգանակուած գումարը կը հասնի 20,000 ֆրանքի :

— Նախարարաց խորհուրդին առաջիկայ նիստին մէջ պիտի վաւերացուի այն ծրագիրը որով մենաշնորհ պիտի տրուի ամբողջ Եգիպտոսի մէջ 120 հատ շէնք շինելու որոնք կենդանիներու առուծախի գործողութեան պիտի գործածուին :

Այդ վաճառատեղիները պետական հողերու վրայ պիտի կառուցուին և անոնց հասցիներն պիտի վճարուին պաշտօնեաները, երկու կառավարական քննիչները — որոնց ամեն մէկուն տարին 750 եգիպտական ոսկի պիտի տրուի — և գրամադիւնի տոկոսները :

Հասցիներն մնացած մասին 0/0 70ը կառավարութիւնը պիտի գանձէ և 30ը ձեռնարկուները :

Յիշեալ վաճառատեղիներուն մէջ բերուած կենդանիներէն հետեւեալ սակագինը պիտի առնուի. ոչխարներէն, այծերէն, գոմէշներէն, հնդկահաւերէն և սաղերէն 2 1/2 միլիէմ, ուղտերէն, էշերէն 3 միլիէմ և ձիերէն, կովերէն ու հորթերէն 10 միլիէմ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Չորեքշաբթի գիշեր Տիարերուանդ Պէնդեան, հայ թատերական խումբին լուսագոյն մէկ անգամը, իր տարեկան նպատի երեկոյթը կուտայ Ապու-Խալիլ թատրոնին մէջ : Ընտրուած խաղը Մոմէ արձան շինողն է որուն մէջ Պ. Աղեքսանեան պիտի կատարէ Ռօսիի դերը :

Տարակոյս չիւայ որ ամեն թատերասերները այդ գիշեր ժամագրութիւն պիտի տան Ապու-Խալիլ թատրոնին մէջ, և պիտի բաշխուեն բնակ այդ համակրելի աշխատաւորը :

ՀՐԱՌԻՐ ԱՌ ԱՅԳԱՅԻՆՍ

Արաբկիրի Առաջնորդական Տեղապահ
Հորմէն առ Եղիպտոսական Արաբկիրցի ազ-
գայինս ուղղեալ մէկ նամակը կարգացուելու
համար, պատիւ ունիմ հրաւիրել զիրենք և
բոլոր ազգայինս քաղաքս, յառաջիկայ կի-
րակի, 20 մարտ, կէս օրէ վերջ ժամը 3ին
գումարուիլ ի Գալստեան վարժարան:

Աղօթարար
Գարիէ 16 մարտ Եզնիկ Բանանայ Պալուցի

ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

1898 փետրուար 23 թուականու Գահիրէի խառն
դատարաններու արձանագրութեանց զիւանին կողմէ
օրինակէս վաւերացեալ պայմանագրութեամբ (sub-
N° 1244-1248):

Ա. Տիար Յակոբ Կիւսիւկեան, վաճառական, հաս-
տատեալ յ'Աղբաւորի:

Բ. Տիար Տիգրան Զաւթեքեան, վաճառական, հաս-
տատեալ ի Գահիրէ:

Գ. Տիար Արմենակ Պէլլեքեան, վաճառական,
հաստատեալ ի Գահիրէ:

Դ. Շահակիյ ընկեր մը (commanditaire):

Վերոյիշեալները հաւաքաբար կազմած են ընկե-
րութիւն մը որ պիտի զբաղի ամեն տեսակ ծխա-
խոտի և սիկարէթներու մեծաքանակ ու փոքրաքա-
նակ առևտուրով և շահագործմամբ:

Այս ընկերութիւն հիմնուած է պարզ յանձնա-
րարիկ եղանակով (société en commandite simple):
Բայց Տեարք Բ. Կիւսիւկեան, Տ. Զաւթեքեան և
Ա. Պէլլեքեանի համար ընկերութիւնը հաւաքական
անուան տակ կը մնայ (en nom collectif): Ընկե-
րութիւնը չորս տարի շարունակ պիտի տեւէ, սկըս-
եալ 1898 փետրուար 1է մինչեւ 1902 մարտ 1:

Ընկերութեան կեդրոնատեղին է Գահիրէ նախ-
կին Զաւթիէ փողոց, վաճառատեղի Ա. Սաֆուեան
եւ ընկ. որուն կը յաջորդէ ընկերութիւնս:

Ընկերութեան անունն է:

Ա. ՍԱՆՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
Յաջորդք

ԶԱՄՔԷՐԹԷՆ, ՊԵՅԼԷՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Միեւնոյն անունը ընկերութեան ստորագրու-
թիւնն ալ է զոր պիտի գործածեն Գահիրէի կեդրո-
նատեղին գտնուող համեմատ ընկերները:

Վասն վաւերականութեան:

Գահիրէ, 8 մարտ. 1898 Յակոբ Կիւսիւկեան
Ա. Ե. Պէլլեքեան
Տ. Զաւթեքեան



ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու
արգոյ հասարակութեան թէ ամսոյս 1էն սկսեալ
գնած ենք Տարա-էլ-Կինէնայի Հայկական փողոց
և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր
գործառնութիւնները: Այդ փուլին գործելու եղա-
նակին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմու-
ծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունե-
վուսի մը պէս լիւրի գոհացնել իրենց վատահու-
թեամբ զմեզ պատուող յաճախորդները:

Կը սիրենք յուսալ որ պատուական ազգայինք
յմեզ պիտի բաջալերեն մեր այս ձեռնարկին մէջ:

Ս. Զուրիկեան եւ Նոբար Հացագործեան
1—15

Ա. Զ. Դ.

Սամուէլ Գուլանան անուն երիտասարդը որ
վերջերս Լոնտոնէ վերադարձած է, պատրաստ է
անգլիերէն դասեր տալ թէ տեսական և թէ գործ-
նական: Փափագողը զիմեն Բարեգործական ընկե-
րութեան սրճարանը:

ՍԱՓՐԻԶ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԷՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս
Պէլլեքեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա-
հիրէ հաստատուած է և մեծապէս դուր թու-
ղուցած իր յաճախորդները, այս անգամ իր
նոր խանութին մէջ (Աթապա էլ Խաթաբ,
թրամուէյի կայարանին դէմ) ամեն զիւրու-
թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ. մաք-
րութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ
ածիլման և թէ վարսայարգարութեան մասին:

ՖՈՐՈԿԻՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՐԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին գոհացուցիչ գիններով:

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԻՄԱՆՆԵՐ:
8—10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական լուսաւոյն գործա-
րաններէն թերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով:
Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սրբապաշտներ:
Թարմ հաւնային ջուրեր, անուշահոտ քիւնք եւն.
Բնական և մանրադրոսական քննութիւններ:
Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ թիշիկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնը ապրտապ
համար: 34—50

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

Կը ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հաղուսաներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
շապիկներ, չիւղազգեստներ, եւն. մաքրութիւն,
ճշգրտահոլութիւն, և խիստ չափաւոր գին:
5.—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Իրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՑ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 4գ.	առտ.	1 2 3 4գ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—
	մեկ.	11 48	—	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—
Տամանհուր	»	երեկոյ	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	3 51	—
Ալէքսանդրիա	ժամ.	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	երեկոյ	—	9 40	—	8 7	—	5 50	—

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Էքսորէս		Խառն		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 4գ.	առտ.	1 2 3 4գ.	առտ.
Աղբաւորի	մեկ.	—	—	7 —	—	7 15	—	9 —	—	9 20	—	երեկ.	—	երեկ.	—	երեկ.	—	երեկ.	—
Տամանհուր	»	—	—	8 6	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	—
Թանթա	ժամ.	—	—	9 12	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—
	մեկ.	6 15	—	9 16	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—
Պէնհա	մեկ.	7 18	—	9 59	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—
Գահիրէ	ժամ.	8 30	—	10 45	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԱՌԱՐՈՑ			ԵՐԵԿՈՑ			ԿԱՅԱՐԱՆՔ			ԱՌԱՐՈՑ			ԵՐԵԿՈՑ		
Գահիրէ	մեկ.	11 40	երեկոյ	—	—	7 —	—	—	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—	—	—	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	—	—	—	7 48	—	—	» կայարան	»	—	—	—	—	—	—	—
	մեկ.	12 33	—	—	—	7 53	—	—	»	»	—	—	—	—	—	—	—
Ջակաղիկ	ժամ.	1 34	—	—	—	8 54	—	—	Խամախիա	»	1 20	—	—	—	—	—	—
	մեկ.	1 44	—	—	—	9 4	—	—	»	»	—	—	—	—	—	—	—
Խամախիա	մեկ.	3 40	—	—	—	1 —	—	—	Զակաղիկ	ժամ.	3 7	—	—	—	—	—	—
Սիւէզ կայարան	ժամ.	—	—	—	—	5 —	—	—	»	մեկ.	3 17	—	—	—	—	—	—
	մեկ.	—	—	—	—	—	—	—		մեկ.	—	—	—	—	—	—	—
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	—	—	—	—	—	Պէնհա	ժամ.	4 13	—	—	—	—	—	—
	մեկ.	—	—	—	—	—	—	—	»	մեկ.	4 17	—	—	—	—	—	—
»	ժամ.	—	—	—	—	—	—	—		մեկ.	—	—	—	—	—	—	—
	մեկ.	—	—	—	—	—	—	—	Գահիրէ	ժամ.	5 5	—	—	—	—	—	—